

ՀԻՆ ՖՐԱՆՍԵՐԵՆԻ ԱՄՔՈՂՋԱԿԱՆ ԲԱՌԱՅԻՆ
ՄԻԱԿՈՐՆԵՐԻ ԲԱԶՄԱՆԴԱՄ ՀՈՄԱՆԻՇՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Շարլ Բալլին իր «Ընդհանուր լեզվաբանություն և ֆրանսերեն լեզվի հարցեր» աշխատության մեջ գրում է. «... այն, ինչը համադրական է լեզվի մի վիճակում, վերլուծական է եղել նրա մեկ այլ վիճակում և ընդհակառակը»¹: Լեզուն կայուն լինելով հանդերձ, գտնվում է մշտական շարժման մեջ: Լեզվական համակարգի այս առանձնահատկությունը, բնականաբար, իր դրսևորումներն է գտնում լեզվական տարբեր գործընթացների ու երևույթների մեջ:

Ասվածը վերաբերում է նաև հին ֆրանսերենի ամբողջական բառային հոմանիշության խնդրին, որի քննմանը նվիրված է սույն հոդվածը:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ շատ հասկացություններ, որոնք ֆրանսերեն լեզվի զարգացման սկզբնական փուլում արտահայտվել են ամբողջական բառային միավորով (մենաբառությամբ), հետագայում արտահայտվել են բառակապակցություններով, որոնց հիման վրա շատ դեպքերում կազմվել են դարձվածքներ:

Ժամանակակից ֆրանսերենում բառակապակցություններով արտահայտված հասկացությունների գործածությունը հին ֆրանսերենի համեմատ ճշտելու նպատակով կատարվել է հին ֆրանսերենով գրված վեպերից մեկի² բնագրի և Ժոզեֆ Բեդիեի կողմից տրված դրա թարգմանության զուգադրական վերլուծությունը, ինչը ցույց է տալիս, որ հին ֆրանսերենի ամբողջական բառերի բառակապակցություններով արտահայտված հոմանիշները զգալի թիվ են կազմում:

¹ Stéu Балли III. Общая лингвистика и вопросы французского языка. М., 1955, стр. 180:

² La châtelaine de Vergy. Conte du XIII^e siècle publié et traduit par Joseph Bédier. L'édition d'Art, Paris, 1927, p. 115:

1. por (p.34)	à cause de (p. 35)
2. si (p.46)	à moins de (p. 45)
3. si (p.44)	à moins que (p.45)
4. adès (p. 46)	sans répit (p.47)
5. par (p. 54)	grâce à (p.55)
6. ... le convoia (p. 66)	... lui fit cortège (p.67)
7. ...ne vous harrai (p.70)	je ne vous prendrai en haine (p.71)
8. au mengiet m'assis (p.74)	... je me suis mise à table (p.73)
9. desfent (p.76)	... fait défense (p.77)
10. A une part du lit s'est traite (p.76)	... elle fait retraite à l'autre bord du lit ... (p. 77)
11. ... en moi ne vous fiez pas tant (p.82)	... vous n'avez pas assez de confiance en moi (p.83)
12. ... ele hei ... (p.86)	... elle a pris en haine (p.85)
13. ... merci	... ayez pitié de moi (p. 93)
14. ... depecier (p. 96)	... mettre en pièces (p.97)
15. ... ma dame l'ataina ...	ma dame lui a fait reproche (p. 107)
16. Et que desfendu il avoit n'amie qu'il ne le doist. (p. 114)	fait que son amie lui avait fait défense de dire ... (p. 115)

Ժամանակակից ֆրանսերենում ավելացել է նման հասկացությունները վերլուծաբար արտահայտող բառակապակցությունների տեսակարար կշիռը, և հաճախակի է դարձել դրանց գործածությունը: Այսպես, «Ստրասբուրգյան երդումների» տեքստի (բնագրի) զուգադրումը դրա միջին և արդի ֆրանսերենով թարգմանությունների հետ, որոնք կատարվել են Ֆերդինանդ Բրյունոյի կողմից, ցույց է տալիս, որ մի շարք բառակապակցություններ, որոնք հայտնաբերվել են ժամանակակից տեքստերում, բացակայում են և՛ բնագրում, և՛ միջին ֆրանսերենի տարբերակում³: Դրանք են՝ *à condition que* (=si), *au cas où* (=si) և այլն:

Ֆերդինանդ Բրյունոն՝ իր «Ֆրանսերենի պատմության» առաջին հատորում, վկայում է այն մասին, որ բազմաթիվ ամբողջական բառեր փոխարինվել են շրջասական դարձվածներով, ինչպես օրինակ՝ *avoier* — *mettre sur la voie*,

³ Brunot F. Histoire de la langue française, Tome I (De l'époque latine à la Renaissance). Paris, 1905, p. 144.

empiegier —prendre au piège, ennoitier — commencer à faire nuit, abelir — sembler beau, s'acorer —être dans le chagrin, adosser — tourner le dos à, aflouré — brodé de fleurs, ainsjornee —point du jour, atrever — faire cesser par une trêve, avesprer — venir sur le soir, béer —faire bouche bée, besloi —deni de justice, champoier —aller à travers champs, chrestienier —rendre chrestien, cuiriée —objet de cuir, desbareter —mettre en fuite, se desroier —quitter son rang, destalenter —ôter l'envie, desuser — perdre l'usage de, desvouloir —cesser de vouloir, emparlé —qui manie facilement la parole, encoan —cette année, engeignier —prendre par ruse, enlatiner —instruire en latin, enlignagier —prouver sa descendance, enoiseler —nourrir comme un oiseau, escarboner —briller comme le feu du charbon, eschequeré —divisé comme un échiquier, essorer —prendre son essor, estovoir —être nécessaire, fabler —dire des fables, forsener —être hors du sens, goloser —désirer ardemment, langourir — être faible, languissant, loisir — être permis, malignier — faire le mal, mespenser — penser mal, ombroier — se reposer à l'ombre և այլն:

Ասվածը հաստատվում է նաև ֆրանսերենի պատմական բառարանների տվյալների վերլուծությամբ, որը մենք կատարել ենք երկու բառարանների հիման վրա, այն է՝ Ս. Ա. Բորոդինայի, Ս. Վ. Գորդինայի, Վ. Ֆ. Շիշմարյուկի «Հին ֆրանսերենի» բառարանը⁴ և Ա. Ժ. Գրեմասի «Հին ֆրանսերենի» բառարանը⁵:

Հենվելով կատարված ուսումնասիրության վրա կարելի է անել հետևյալ դասակարգումը.

1. Հին ֆրանսերենի շատ ամբողջական բառային միավորներ ժամանակակից ֆրանսերենում արտահայտվում են միայն բազմանդամ հոմանիշների միջոցով: Այստեղ տարբերում ենք հետևյալ դեպքերը.

ա) Հին ֆրանսերենի բառն անհետացել է և արդի ֆրանսերենում արտահայտվում է միայն վերլուծաբար, ընդ որում հին ֆրանսերենի բառի և նրա վերլուծական հոմանիշի միջև ծագումնաբանական կապ: Օրինակ՝ *afole* —mettre en mauvais état, *apareillier* —faire semblant, *assoldre* — donner à l'absolution, *assouvir* —venir à bout, *avenir* —avoir lieu, *avers* —en comparaison de,

⁴ Бородин М. В., Гордина М. В., Шишмарев В. Ф. Сло-варь старофранцузского языка. М.-Л., 1955.

⁵ Greimas A. J. Dictionnaire de l'ancien français. P., 1968.

avesprer—faire tard, **priveement**—à part, en particulier, **tresvirer**—faire tourner, **triquemer**—pauvre diable, **ulagier**—mettre hors la loi, **verbloier**—parler à haute voix, **vesprer**—commencer à faire nuit, **welcomer**—accueillir avec bienveillance և այլն:

բ) Հին ֆրանսերենում տվյալ հասկացությունն արտահայտվել է բառով, իսկ արդի ֆրանսերենում արտահայտվում է բառակապակցությամբ. ընդ որում նրանց միջև գոյություն ունի ծագումնաբանական կապ: Հմմտ. **aconter** — tenir compte, **acoster** — mettre à côté, se mettre à côté, **acreire** — faire crédit, prêter sur parole, prendre à crédit, **afoler**—mettre en mauvais état, **aisier**—se mettre à l'aise, devenir facile, **ajourner**—faire jour, **angoisseusement** — avec angoisse, **anuitier** — faire nuit, **apaler** — faire la paix, **apres** — auprès de, **aresoner a)** mettre à la raison, **b)** adresser la parole, **ar(r)outer** — se mettre en route, **arrangier a)** mettre en rang, **b)** prendre place, **asserir** — faire soir, **atendre** — faire attention, **avanz a)** en avant, **b)** plus loin, **avoier** — mettre dans la voie, se mettre en route, **raciner**—pendre racine, **trever**—conclure une trêve, **usufruitier**—posséder en usufruit, **usurer**—prêter à usure, pratiquer l'usure, **vaguier**—faire des vagues, **ventreillier**—se coucher sur le ventre, **vermeiller**—devenir vermeil, **vigner**—cultiver la vigne, **vigorer**—donner de la vigueur, **volgrener**—réduire en grain և այլն:

2. Հին ֆրանսերենի բառային միավորը պահպանվում է արդի ֆրանսերենում (չնայած փոքր-ինչ վերափոխված ձևով), սակայն արտահայտվում է նաև բառակապակցության ձևով: Օրինակ՝ **acorder**—accorder, être d'accord, **adoleir**—adoucir, rendre doux, **fuir**—fuir, prendre la fuite, **alumer**—allumer, mettre le feu, **vuidier**—vider, rendre vide, **vereillier**—verrouiller, fermer au verrou, **verdoier**—verdir, rendre vert, **veler**—voiler, couvrir d'un voile, **troer**—trouer, faire des trous, **guerreier**, **-oyer**—guetroyer, faire la guerre:

3. Լինում են դեպքեր, երբ հին ֆրանսերենի բառը մնում է, բայց շատ քիչ է գործածվում և փոխարինվում է բառակապակցությամբ: Օրինակ՝ **trépigner**—trépigner, piétiner avec violence:

4. Որոշ դեպքերում հին ֆրանսերենի բառի մի իմաստը արդի ֆրանսերենում ունի իր բառային համապատասխանությունը, իսկ մյուս իմաստն արտահայտվում է վերլուծաբար: Օրինակ՝ **nidifier**—1) nicher, 2) faire son nid, **pignier**—1) peigner, 2) donner des coups de dents, des coups de griffe:

Բերված օրինակները վկայում են այն մասին, որ ժամանակակից ֆրանսերենում ավելացել է նման հասկացությունների տեսակարար կշիռը, և հաճախակի է դարձել դրանց գործածությունը, ինչը տարբեր հեղինակներ բացատրում են տարբեր կերպ:

Ոմանք վերլուծաբար արտահայտված հասկացությունների գործածության հաճախակի լինելը բացատրում են ածանցական բառակազմության հարաբերական աղքատությամբ, հատկապես այն խոչընդոտներով, որոնց ֆրանսերենը հանդիպում է ձևաբանական բառակազմության ժամանակ⁶:

Ձ. Լևիտը, խոսելով վերլուծական լեզվամիավորների մասին, դրանց կենսունակությունը բացատրում է նրանով, որ այդ միավորներն օժտված են այնպիսի հատկանիշներով, որոնք լրացնում են ամբողջական բառային միավորների թերի կողմերը (ինչպես օրինակ՝ հնչյունական և ձևաբանական անինքնուրույնությունը, բազմիմաստությունն ու համանունությունը, չպատճառաբանվածությունը, արտահայտչականության բացակայությունը և այլն)⁷: Իսկ վերլուծական լեզվամիավորները բնորոշվում են արտահայտչականությամբ, հնչյունական ինքնուրույնությամբ, ձևաբանական և իմաստային պատճառաբանվածությամբ, բառիմաստի հստակությամբ:

Վերլուծական լեզվամիավորների մեծ տեսակարար կշիռը որոշ լեզվաբաններ բացատրում են նաև լեզվի վերացական դառնալու միտումներով⁸:

Սակայն, մյուս գործոնների ազդեցությունը չժխտելով հանդերձ, այնուամենայնիվ պետք է ասել, որ հին ֆրանսերենի ամբողջական բառային միավորների բազմաճյուղ հոմանիշությունը ժամանակակից ֆրանսերենում, հիմնականում պայմանավորված է ֆրանսերեն լեզվի ընդհանուր վերլուծական միտումներով:

Վերլուծական կաղապարներով ստեղծվում են շատ վերլուծական լեզվամիավորներ (այդ թվում և դարձվածքներ): Օրինակ՝ *faire grève* (XIX դ.), *faire*

⁶ J. Marouzeau, *Notre langue. Enquêtes et récréations philologiques*. Paris, 1955 (Chapitre II. Déficiences de la dérivation).

⁷ Сб'у Леви́т З. Н. Лексикология французского языка. М., 1971. с. 129.

⁸ Չմմտ. "... de plus en plus on tend à dire *faire la guerre* et non plus *guerroyer*. ... Le verbe est de plus en plus simple et effacé. Curieux indice de la propension de notre langue à l'abstrait, ou du moins à exprimer des états ou des résultats d'action, plutôt que des actions". (A. Thérive, *Clinique du langage*. Paris, 1956, p. 76-77).

surface (XX դ.), faire conversation (XIX դ.), faire bloc (XIX դ.), faire panache (XX դ.) և այլն: 70-ական թվականների նորաբանությունների բառարանները գրանցում են որոշ վերլուծական լեզվամիավորներ, որոնք ստեղծվել են faire+գոյական կաղապարով: Պ. Գիլբերի բառարանում բերվում են մի շարք բառակապակցություններ faire բայով՝ faire instituteur, faire médecin («սովորել տվյալ մասնագիտությունը ձեռք բերելու նպատակով»)⁹:

Վ. Բլոխիցի և Վ. Ռունկևիցի նորաբանությունների բառարանում համ-դիպում ենք հետևյալ վերլուծական լեզվամիավորները, որոնք ի հայտ են եկել հրապարակախոսական խոսքում՝ faire populaire—se donner des airs affables pour gagner le peuple, faire boomerang—se retourner contre son auteur, faire pâle figure—faire peu d'impression և այլն¹⁰:

Արդի ֆրանսերենում շատ բառեր (բառույթներ) մասնապես ունեն իրենց բարդ (բազմանդամ) տարբերակները: Հմմտ. user de—faire usage de, faillir—faire erreur, fuir—prendre la fuite, se taire—faire silence, sombrer—faire naufrage, accueillir—faire accueil, jurer—faire serment, mentionner—faire mention, participer—prendre part, écouter—prêter l'oreille, s'habituer—prendre l'habitude, posséder—prendre possession, chasser—mettre à la porte, impressionner—faire impression, éprouver—mettre à l'épreuve, tomber—faire une chute, pendant—au cours de, envers—à l'égard de.

Երկու տարբերակների առկայությունը բացատրվում է նրանով, որ բազմանդամ տարբերակը՝ բառակապակցությունը, համեմատած բառի հետ ավելի մեծ արտահայտչականություն ունի¹¹: Բացի այդ, վերլուծական տարբերակը նախադրյալներ է ստեղծում այդ բառակապակցության դիպվածային փոխակերպումների համար, մի հանգամանք, որը հաճախ անտեսվում է որոշ լեզվաբանների կողմից:

⁹ Guilbert P. Dictionnaire des mots nouveaux. P., 1971.

¹⁰ Blochivitz W. und Runkeivitz W. Neologismen der französischen Gegenwartssprache unter besonderer Berücksichtigung des politischen Wortschatzes. Berlin, 1971.

¹¹ Այստեղ իր արտահայտությունն է գտնում Ֆ. դե Սոսյուրի այն միտքը, որ «նշանակիչի փոփոխությունը հանգեցնում է հասկացության փոփոխմանը», ինչը շատ դեպքերում առաջացնում է նույնպես հարանշանակությունների փոփոխություն (Фердинанд Де Соссюр, Труды по языкознанию. Москва. 1977, стр. 153).